

## **ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՕՐԱԿԱՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ**

### **Առաջարկություններ**

Սույն փաստաթղթով ներկայացվում են Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաջարկները Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Կառավարությանը՝ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու և հաջողություններ ամրագրելու նպատակով:

### **Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքում ակնկալվող փոփոխությունները**

2003թ.-ից ի վեր Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է «պայքար կոռուպցիայի դեմ»՝ միանալով մի շարք միջազգային պայմանագրերի ու ցանցերի, մշակելով և իրականացնելով երեք հակակոռուպցիոն ռազմավարություն և հարյուրավոր միջոցառումներ: Սակայն, ո՛չ միջազգային կազմակերպությունների ցուցանիշներով ու համաթվերով և ո՛չ էլ տեղական հարցումների կամ դիտարկումների տվյալներով, կոռուպցիան մեր երկրում չի պակասել:

2018թ. գարունը Հայաստանում նշանավորվեց ժողովրդական հեղափոխությամբ, որի շարժիչ ուժը քաղաքացիների ձգտումն ու ծարավն էր արդարության նկատմամբ և նրանց կուտակված դժգոհությունը կոռումպացված ու ամբարտավան իշխանություններից: Նույն թվականի սեպտեմբերի՝ Երևան քաղաքի ավագանու և դեկտեմբերի՝ խորհրդարանական արտահերթ ընտրությունների արդյունքները, ի լրումն մի շարք սոցիոլոգիական հարցումների տվյալների, ցույց տվեցին քաղաքացիների ճնշող մեծամասնության վստահությունը հեղափոխությունն առաջնորդող քաղաքական ուժի նկատմամբ՝ այդպիսով նաև հավաստելով նրանց ակնկալիքները տվյալ ուժից՝ Հայաստանում արդարություն հաստատելու, այդ թվում՝ կոռուպցիան արմատախիլ անելու առումով:

Կոռուպցիան վերացնելու առումով քաղաքական կամքի իսպառ բացակայության պարագայում նախորդ կառավարությունն, այնուամենայնիվ, ձեռնարկել է մի շարք քայլեր այդ ուղղությամբ՝ իրականացրելով մի շարք միջոցառումներ և արձանագրելով որոշակի առաջընթաց, մասնավորապես՝ հակակոռուպցիոն քաղաքականության հիմքերի ստեղծման առումով: Ավելորդ է ասել, որ ակնկալիքները նոր դեկավարությունից անհամեմատ ավելի մեծ են, և ուստի նրա հակակոռուպցիոն ծրագիրը պետք է լինի ավելի հավակնոտ ու ծավալուն:

**Նոր կառավարության կոռուպցիայի դեմ պայքարն իր առջև պետք է նպատակ դնի խնդիր՝ առաջիկա հինգ տարիների ընթացքում հասնելու հետևյալ փոփոխություններին.**

1. կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիների և հաստատությունների լայն ներգրավվածության ապահովում,
2. հանրային բացարձակ անհանդուրժողականություն կոռուպցիայի նկատմամբ,
3. կառավարման բոլոր մակարդակներում թափանցիկության և հաշվետվողականության մեխանիզմների ստեղծում,
4. իշխանության բոլոր ճյուղերում հայեցողական որոշումների հնարավորությունների առավելագույն սահմանափակում և վերահսկողության ուժեղացում,
5. կոռուպցիան կանխարգելելու և բացահայտելու համար իրավասու կառույցների համար պատշաճ ռեսուրսների, կարողությունների ու գործիքակազմի ապահովում,
6. կոռումպացված անձանց պատժելիության անխուսափելիություն:

Այս փոփոխությունները կերաշխավորեն կոռուպցիայի ընկալման տարբեր ցուցանիշների ու համաթվերի բարելավումը:

#### **Կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մոդել**

Կոռուպցիայի դեմ պայքարում առավել առաջնահերթ և անհետաձգելի միջոցառումներից մեկը հավակոռուպցիոն ինստիտուցիոնալ մոդելի (ունիվերսալ կամ տարանջատված) վերաբերյալ որոշման ընդունումն է, քանի որ դրանով է հիմնականում պայմանավորված լինելու հավակոռուպցիոն ռազմավարությունը և միջոցառումների նախագծումը:

Չարկ է նշել, որ Չայաստանում տարիների ընթացքում դրվել են տարանջատված ինստիտուցիոնալ մոդելի հիմքերը, որտեղ կանխարգելիչ գործառույթները միտված են եղել հանրային պաշտոնյաների ու ծառայողների օրինավորության/բարեվարքության (integrity) համակարգի ստեղծմանը՝ հիմնականում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի միջոցով, իսկ կոռուպցիայի բացահայտումը վերապահված է եղել իրավապահ մարմիններին, հիմնականում՝ Չատուկ քննչական ծառայությանը:

Ներկայում հաճախ է քննարկվում Չայաստանում ունիվերսալ մոդել ներդնելու գաղափարը՝ ենթադրելով, որ կանխարգելիչ և բացահայտման գործառույթների միավորումը կարող է լինել ավելի արդյունավետ: Կարծում ենք, որ ունիվերսալ մոդելի առաջ մղումը նախկինի անարդյունավետության պատճառաբանությամբ անհիմն է, քանի որ նախկին կառավարության քաղաքական կամքի բացակայության պարագայում ցանկացած մոդել և կառույց դատապարտված էր ձախողման: Ընդհակառակը, կարելի է պնդել, որ Չայաստանում որևէ մոդել փաստացի չի գործել, և որևէ առնչվող կառույց փաստացի չէր կարող իրականացնել իր առջև

դրված խնդիրները, քանի որ մի կողմից զրկված էր եղել պատշաճ գործիքակազմից, մյուս կողմից գործել է համակարգային կոռուպցիայի պայմաններում:

Հարկ է ընդգծել, որ աշխարհի տարբեր երկրների փորձը խիստ բազմազան է, և չկա որևէ օրինաչափություն, որը լինել պայմանավորված մոդելի ընտրությամբ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մոդելի վերաբերյալ ճիշտ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքական, տնտեսական, կառավարման, իրավական, կազմակերպական, կատարողական և հանրային վստահության գործոնները<sup>1</sup>, ինչպես նաև գնահատել, թե ինչպիսի կառուցվածքի պայմաններում լավագույնս կարող են իրականացվել կոռուպցիայի կանխարգելման (օրինավոր հանրային ծառայության ձևավորման, շահերի բախման կանխարգելման, գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության), կոռուպցիոն դրսևորումների բացահայտման (օպերատիվ հետախուզություն, հետաքննություն, նախաքննություն), կրթության ու հանրային աջակցության, հակակոռուպցիոն միջոցառումների մոնիտորինգի և համակարգման գործառույթները<sup>2</sup>: Անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային փորձը, որով խորհուրդ է տրվում ելնել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ձևավորված ավանդույթներից ու իրողություններից<sup>3</sup>: Միևնույն ժամանակ, ցանկալի է անսալ փորձագետների կարծիքներին, որոնց զգալի մասն առավել ռիսկային է համարում ունիվերսալ մոդելի ընտրության հետևանքները և ավելի կարճատև՝ դրա արդյունքները:

**Առաջարկվում է հնարավորինս արագ կայացնել ինստիտուցիոնալ մոդելի վերաբերյալ քաղաքական որոշումը և, ըստ այդմ, ձեռնամուխ լինել համապատասխան կառույցների ձևավորմանն ու դրանց կարողությունների զարգացմանը, ինչպես նաև հակակոռուպցիոն ռազմավարության ու միջոցառումների ծրագրի ընդունմանը:**

**ԹԻՉԿ առաջարկն է կոռուպցիայի կանխարգելումն ու բացահայտումն առանձնացնել, և ունենալ կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված անկախ մարմին՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները և կոռուպցիայի հարցերով մասնագիտացված անկախ իրավապահ մարմին՝ հիմք ընդունելով նույն կոնվենցիայի 36-րդ հոդվածի պահանջները:**

Հաշվի առնելով, որ ԹԻՉԿ-ը ջատագովում է կանխարգելման և բացահայտման գործառույթների տարանջատված մոդելը, ստորև առաջարկվող ինստիտուցիոնալ միջոցառումները հիմնականում ներկայացված են տվյալ մոդելի համատեքստում, թեև նույն հարցերին անդրադարձ պետք է կատարվի ցանկացած մոդելի պարագայում՝ հաշվի առնելով իրավասությունների և գործառույթների համապատասխան առանձնահատկությունները:

<sup>1</sup><https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf>

<sup>2</sup><https://transparency.am/files/publications/1536231168-0-179733.pdf>

<sup>3</sup><https://www.oecd.org/corruption/acn/specialisedanti-corruptioninstitutions-reviewofmodels.htm>

## Կոռուպցիայի կանխարգելում

### *Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով*

2017թ.-ին ընդունվեցին «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» և 2018թ.-ին՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքները, որոնք ամրագրեցին կոռուպցիայի կանխարգելման նպատակով հանրային պաշտոնյաների ու ծառայողների օրինավորության հիմքերը, այդ թվում՝ շահերի բախման իրավիճակում գործողությունների ու որոշումների արգելման, գույքի ու եկամուտների հայտարարագրերի ուսումնասիրություն իրականացնելու առումով: 2018թ. հետհեղափոխական իրավիճակում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորման գործընթացը կաթվածահար է եղել, ինչի արդյունքում մինչ օրս պատշաճ չէն իրականացվում նշված օրենքներով սահմանված նորմերը:

Դրան զուգահեռ, հետհեղափոխական խառնաշփոթում հապճեպ և խիստ վիճահարույց գործընթացներով սկսել է ձևավորվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության մրցութային խորհուրդը: Մասնավորապես՝ 2018թ. մայիսին կասկածելի և ոչ թափանցիկ եղանակով իրականացվել է ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ հանրային խորհրդի ներկայացուցիչների ընտրությունը՝ ի սկզբանե անվստահություն սերմանելով մրցութային խորհրդի և դրա որոշումների նկատմամբ, ինչպես նաև կասկածի տակ դնելով նրա կողմից ընտրվող Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լեգիտիմությունը:

Հարկ է նշել, որ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության մրցութային խորհրդի և դրանում հանրային մասնակցության ձևաչափը որդեգրվել է նախորդ կառավարության կողմից՝ հանրային մասնակցության իմիտացիայի նպատակով, և խիստ վիճելի է դրա ձևավորման եղանակն ու կազմը: Ընտրված մրցութային եղանակը (թեսթավորում, հարցազրույց և ԱԺ-ի կողմից քվեարկություն), ըստ էության, չի բացահայտում Հանձնաժողովի անդամի թեկնածուների իրական համապատասխանելիությունը սահմանված պահանջներին: Թեստավորումը քնորոշ է կարիերային, գիտելիքահենք ծառայողներին և, որպես կանոն, նման եղանակով ընտրված հանրային ծառայողների մրցույթը կազմակերպվում է անմիջապես այն մարմնի ծառայողների կողմից, որոնք մասնագիտական գիտելիքներ, հստակ պատկերացումներ և հմտություններ ունեն տվյալ ոլորտում: Մինչդեռ ԱԺ-ի կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովը չունի կոռուպցիայի կանխարգելման ոլորտի վերաբերյալ մասնագիտական պատկերացումներ և գիտելիք: Միաժամանակ, կոռուպցիայի կանխարգելման ապագա Հանձնաժողովի անդամները չունեն կարիերային ծառայության և գիտելիքահեն կամ ըստ արժանիքների ընտրության գործընթացի անհրաժեշտություն, քանի որ չեն հանդիսանում հանրային ծառայողներ, այլ ինքնավար պաշտոնների խմբի հանրային պաշտոնատար անձիք են: Համանմանությամբ, Տնտեսական մրցակցության հանձնաժողովի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամների ընտրությունը նույնպես չի

կազմակերպվում են ման գործընթացով, այլ ներկայացվում է իշխանության կառավարող ուժի կողմից թեկնածուների ներկայացման գործընթացով:

**Առաջարկվում է հնարավորինս շտապ վերանայել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքը, մասնավորապես Հանձնաժողովի անդամների ընտրության կարգը և վերացնել հանրային մասնակցության կեղծ ձևաչափը՝ հանձնաժողովի անդամների ընտրությունը վերապահելով համաժողովրդական ընտրությամբ ձևավորվող Ազգային ժողովի պատգամավորներին՝ որպես զուտ քաղաքական ընտրություն:**

Կառավարությունը պետք է հնարավորինս շուտ ձեռնամուխ լինի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կամ այլ կանխարգելող մարմնի նոր ձևաչափով ձևավորմանը՝ ապահովելով օրինավորության համակարգի կայացումը, այդ թվում՝ էթիկայի հանձնաժողովների ու օրինավորության հարցերով պատասխանատուների ինստիտուտների ձևավորումը, հանրային պաշտոնյաների ու ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու շահերի բախման պատշաճ կանխարգելումն ու կարգավորումը, և գույքի, եկամուտների ու շահերի հայտարարագրման նոր համակարգի կիրարկումը:

Հարկ է նաև չբացառել կոռուպցիայի կանխարգելման մարմնի առավել կոնկրետ գործառնությունների վերաբերյալ մասնագիտական քննարկումների հետագա ծավալումն ու դրանց վերանայումը՝ հաշվի առնելով հանրային ոլորտի այլ ռեֆորմները և նպատակահարմարությունները: Օրինակ՝ եկամուտների համատարած հայտարարագրման քաղաքականությունն որդեգրելու պարագայում՝ գույքի և եկամուտների հայտարարագրերի հավաքագրումը հնարավոր է վերապահել հարկային մարմիններին, հանրային ծառայության օրինավորության համակարգը կարելի է տարածել հանրային ծառայության ընդլայնված ոլորտներում:

### *Հանրային ծառայություն*

Հանրային ծառայությունը կամ հանրային հատվածը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի դրույթների համաձայն դիտարկվում է որպես կոռուպցիայի կանխարգելման կարևորագույն բաղադրիչ: Դրա օրինավորության ապահովման համար առանցքային նշանակություն ունեն հստակ իրավակարգավորումները և պատշաճ կառավարումը:

«Հանրային ծառայության մասին» 2018թ. ՀՀ նոր օրենքով որոշ արմատական փոփոխություններ կատարվեցին նախկինում գործող հանրային ծառայության կառուցվածքում: Մասնավորապես, հստակեցվեց հանրային պաշտոնյա և հանրային ծառայող եզրույթները, ներմուծվեցին հանրային ծառայության կոնկրետ սկզբունքները, դասակարգվեցին հանրային

պաշտոնյաների խմբերը և կոնկրետ սահմանվեցին հանրային ծառայության տեսակները: Հանրային ծառայությունում ներդրվեց օրինավորության/ բարեվարքության Նոր համակարգ, սահմանվեցին դրա սկզբունքները, դրանցից բխող վարքագծի կանոններն ու կանոնագրքերի պահանջները, դրվեցին հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության Նորմերի ու անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների ու շահերի բախման կարգավորումներն իրականացնող էթիկայի հանձնաժողովների ու յուրաքանչյուր մարմնում ստեղծվելիք բարեվարքության հարցերով կազմակերպիչների ինստիտուտների հիմքերը: Այդուհանդերձ, հանրային ծառայության ամբողջական կարգավորման համար միասնական մարմին չստեղծվեց: ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակը դիտվում է որպես հանրային ծառայությունը կարգավորող հիմնական կառույց, մինչդեռ, քաղաքացիական ծառայության գործունեությունը համակարգող փոխվարչապետի կողմից ընդունված իրավական ակտերը չեն կարգավորում ողջ հանրային ծառայությունը: Արդյունքում՝ հանրային ծառայության տեսակների կարգավորումները իրականացվում են առանձին օրենքներով, բացակայում է միասնական հանրային ոլորտի բարեփոխումների պատասխանատուի ինստիտուտը:

Հայաստանում դեռևս շարունակվում է հանրային ծառայության ընկալումը «նեղ» շրջանակով, այսինքն՝ այն ներառում է միայն պետական և համայնքային կառավարչական լիազորություններ իրականացվող մասնագիտական գործունեություն կազմակերպող պետական և համայնքային մարմինները: Մինչդեռ «լայն» իմաստով հանրային ծառայության կազմակերպումը պահանջում է դրանում դիտարկել նաև հանրային կրթությունը, առողջապահությունը, մշակութային և այլ ոչ առևտրային հանրային նշանակություն և հանրային միջոցներ սպառող կազմակերպություններն ու ծառայությունները: Միաժամանակ հանրային ծառայության համակարգում պետք է ներառվեն պետական և համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունները:

Բացի վերոնշյալը, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը մի շարք արմատական հարցերում ունի լրջագույն բացեր: Մասնավորապես, խառնաշփոթ է առաջացնում պաշտոնների դասակարգումը քաղաքական, հայեցողական, ինքնավար և վարչական խմբերում, դրանց տրամաբանությունը և դրանց հակասությունները առանձին տեսակի (օրինակ՝ դիվանագիտական, ազգային անվտանգության, զինվորական և այլն) ծառայությունների համատեքստում: Դասակարգման հստակեցումը խիստ կարևոր է, մասնավորապես կոռուպցիոն ռիսկերի կառավարման տեսանկյունից, քանի որ քաղաքական ու հայեցողական պաշտոնյաների համար՝ կապված նրանց կողմից ընդունվող որոշումների ու պատասխանատվության շրջանակի հետ, պետք է սահմանվի առավել խիստ և տարբերակված օրինավորության Նորմեր, սահմանափակումներ ու պահանջներ, քան հանրային ծառայության այլ պաշտոնյաների նկատմամբ:

**Առաջարկվում է ընդլայնել հանրային ծառայության հասկացությունը և իրականացնել ամբողջական կարգավորում, այդ թվում՝ կրթական, առողջապահական, մշակութային**

**հաստատությունների ծառայողների, պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների ղեկավար պաշտոնյաների համար և այլն: Հարկ է միասնականացնել հանրային ծառայության կարգավորումներն ու դրանց ապահովման համար ունենալ մեկ պատասխանատու մարմին: Անհրաժեշտ է վերանայել և հստակեցնել պաշտոնների դասակարգումները:**

#### *Գույքի և եկամուտների հայտարարագրեր*

Չնայած որ անցած տարիների ընթացքում բարելավվել են պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման գործընթացները և էլեկտրոնային հայտարարագրման համակարգը առավել մատչելի է դարձրել հայտարարատու պաշտոնատար անձանց համար հայտարարագրման գործընթացը, հայտարարագրման համակարգն ունի զգալի թերություններ և միտված չէ «ապօրինի հարստացման» առերևույթ ռիսկերի բացահայտմանը: Հայտարարագրման ենթակա տվյալները բավարար չեն իրավասու մարմնի կողմից անհամապատասխանությունների կամ խնդիրների բացահայտման համար, իսկ մի շարք տվյալներ ոչ թափանցիկ են հանրության համար:

Գույքի և եկամուտների հայտարարագրում շարունակվում է պահպանվել այսպես կոչված «թանկարժեք գույքի» 8 մլն. ՀՀ դրամ հայտարարագրման արժեքային շեմը: Նվիրատվություններն ու օգնությունները հայտարարագրվում են եկամուտներ բաժնում և չի երևում թե ինչ տեսակի նվերներ է ստացել հայտարարատու պաշտոնատար անձը և նրա ընտանիքի անդամները: Պաշտոնատար անձի ստացած վարկերն ու այլ փոխառությունների չմարված մնացորդները չեն հայտարարագրվում: Միաժամանակ, չեն հրապարակվում պաշտոնյաներին նվիրատվություն անող ֆիզիկական և իրավաբանական անձանց անունները/անվանումները, եկամուտ վճարողների անունները/անվանումները, ունեցած գույքի գտնվելու վայրը, ինչը չի ապահովում և երաշխավորում հարստացման նկատմամբ պատշաճ հանրային վերահսկողություն և կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման արդյունավետություն:

Առկա են մի շարք անհիմն շեմային սահմանափակումներ, որոնք թույլ են տալիս ընտանիքի այլ անդամների անունով գրանցելու միջոցով թաքցնել պաշտոնատար անձի իրական գույքը: Այսպես, ամուսնու դեպքում նախատեսում է հայտարարագրել գույքը (շարժական և անշարժ)՝ առանց գնային շեմի սահմանափակման, իսկ համատեղ ապրող ընտանիքի անդամի, կամ անչափահաս զավակի, կամ ինամակալության ու հոգաբարձության տակ գտնվող անձի անշարժ գույքը հայտարարագրվում է, եթե գործարքի ընդհանուր գինը գերազանցել է 50 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ շարժական գույքի դեպքում՝ 8 միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Մեկ այլ տարբերակված մոտեցում է կիրառվում նաև ընտանիքի անդամների դրամական միջոցների հայտարարագրման դեպքում, այսպես՝ հայտարարագրման և հրապարակման ենթակա են բարձրաստիճան պաշտոնատար անձի միայն

ամուսնու դրամական միջոցները, իսկ համատեղ ապրող ընտանիքի անդամների, անչափահաս զավակի ու խնամակալության ու հոգաբարձության տակ գտնվող անձանց դրամական միջոցներն ընդհանրապես չեն հայտարարագրվում:

Գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգը մասնատված է: Հայտարարագրման համակարգից դուրս են մնացել ոչ առևտրային և պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոնյաները, ավագանու անդամները, որոնք ապահովում են հանրային ծառայության բավականին մեծ հատվածի գործունեությունը: Մյուս կողմից, պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրումը կրկնվում է այլ կառույցներում և հանգեցնում ռեսուրսների անարդյունավետ օգտագործման: Այսպես, պաշտոնատար անձանց հայտարարագրման համակարգին զուգահեռ Ազգային ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ թեկնածուների համար գործում է հայտարարագրման համարյա նույնանման համակարգ՝ մեկ այլ ժամանակահատվածի համար՝ ընդ որում առանց պատշաճ վերահսկողության:

«Հանրային ծառայության մասին» 2018թ. մարտի 23-ի ՀՀ օրենքով գույքի և եկամուտների հայտարարագրման տվյալներում վերացվել են արժեքային առանձին շեմերը հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների համար և միասնականացվել են հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը հայտարարատու պաշտոնատար անձի և ընտանիքի բոլոր անդամների մասով, հայտարարատու պաշտոնատար անձանց համար նախատեսվել է շահերի հայտարարագրման նոր ինստիտուտ: Հայտարարագրման այս նոր բարելավված կարգավորումները ուժի մեջ պետք է մտնեն 2019թ. հունվարի 1-ից, սակայն դրանք չեն իրականացվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ձևավորումը հետաձգելու և նոր հայտարարագրման համակարգին պատրաստ չլինելու պատճառով:

**Առաջարկվում է ընդլայնել հայտարարատու պաշտոնատար անձանց շրջանակը, մեկ մարմնի ներքո միավորել հանրային պաշտոնյաների ու ծառայողների, պատգամավորության և ավագանու անդամի թեկնածուների, կուսակցությունների գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման համակարգերը, վերանայել հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը, վերացնել հայտարարագրման անհիմն շեմերը՝ ստեղծելով հնարավորություն, որ վերլուծության գործընթացում ի հայտ բերելու «ապօրինի հարստացման» անհամապատասխանությունները: Անհրաժեշտ է առավել թափանցիկ դարձնել հրապարակման ենթակա տվյալների ցանկը (նվիրատուների անունները/անվանումները, եկամուտ վճարողների անունները/անվանումները, գույքի գտնվելու վայրը և այլն)՝ ապահովելով հանրության կողմից կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման արդյունավետությունը:**



*Հանրային պաշտոնյաների ու ծառայողների անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումներ*

Հանրային պաշտոնյաների ու ծառայողների անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների բացահայտման գործիքներից է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված շահերի հայտարարագրումը, որը սակայն ունի մի շարք թերություններ: Մասնավորապես, շահերի հայտարարագրումը չի տարածվում բոլոր հանրային պաշտոնյաների խմբերի վրա, դրանցում ներառված տվյալները բավարար չեն իրական սեփականատերերի բացահայտման, ընտանիքի անդամների, մերձավոր ազգակցությամբ և ինսամիությամբ կապված անձանց, ինչպես նաև այլ անձանց հետ կնքված պայմանագրերի և այլ սահմանափակումների խախտումների բացահայտման համար: Սահմանված են շահերի հայտարարագրման արժեքային շեմեր, որոնք հիմնավորված չեն: Շահերի հայտարարագիրը չի պարունակում տվյալներ որպես պետության ներկայացուցիչ հանրային պաշտոնյայի կողմից ստորագրված պայմանագրերի վերաբերյալ, ինչպես նաև՝ «պաշտոնից ազատվելուց հետո մեկ տարվա ընթացքում» այլ գործատուի մոտ կամ կազմակերպությունում աշխատանքի ընդունման վերաբերյալ: Կանոնակարգված չեն հանրային պաշտոնյայի ու ծառայողին ներկայացվող մի շարք այլ սահմանափակումներ ու արգելքներ, օրինակ՝ քաղաքական պաշտոն զբաղեցնողների ներգրավումը կրթական հաստատությունների հոգաբարձուների խորհուրդներում: «Հանրային ծառայության մասին օրենքը» շահերի հայտարարագրման ներքո նախատեսում է պետական պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամի մասնակցությամբ կազմակերպությունների պետական ու համայնքային գնումների պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության հայտարարագրում, մինչդեռ նույն օրենքով չի նախատեսվում սահմանափակում կամ արգելք հանրային պաշտոնյայի ու ծառայողի կողմից պետական և համայնքային բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի գնումների գործընթացում տվյալ կազմակերպության հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու վերաբերյալ:

**Առաջարկվում է շահերի բախման հայտարարագրերում լրացնել հանրային պաշտոնյաների ու ծառայողների անհամատեղելիության և այլ սահմանափակումների պահանջները՝ ստեղծելով հնարավորություն բացահայտելու սահմանափակումների առերևույթ խախտումները, ինչը հնարավորություն կտա կոռուպցիայի կանխարգելման մարմինն ունենալու գործնականում կիրառելի գործիքակազմեր և մշակելու դրանց կիրարկման ընթացակարգեր հանրային ծառայության ոլորտային էթիկայի հանձնաժողովների ու օրինավորության/բարեվարքության հարցերով պատասխանատուների համար: Անհրաժեշտ է զուգահեռ փոփոխություններ անել առնչվող այլ իրավական ակտերում և սինքրոնացնել սահմանափակումները:**

### *Ձեռնարկատիրական գործունեության արգելքներ*

ՀՀ օրենսդրությունն արգելում է հանրային պաշտոնյաներին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, մինչդեռ կան պաշտոնյաներ, որոնք գալիս են մասնավոր հատվածից և պաշտոններ զբաղեցնելուն զուգահեռ շարունակում իրենց ձեռնարկատիրական գործունեությունը՝ երբեմն ընկերությունները գրանցելով ընտանիքի անդամների անունով:

Հայաստանում ներկայումս չկա օրենսդրական պահանջ՝ բացահայտել ընկերությունների իրական սեփականատերերին (այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց): Իրական սեփականատերերի բացահայտումը մինչև 2020թ. նախատեսվել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը Հայաստանի անդամակցության շրջանակում հանքարդյունահանող ընկերությունների համար: Այսպիսի առաջարկություն բազմիցս ներկայացվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելությունների զեկույցներում՝ զանգվածային լրատվամիջոցների համար: Իրական սեփականատերերի բացահայտումը կարևոր է նաև Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության Հարկային նպատակներով թափանցիկության ապահովման և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումին Հայաստանի անդամակցությունն ապահովելու համար<sup>4</sup>: Ներկայումս իրական սեփականատերերի բացահայտման մեխանիզմը նախատեսվում է Բաց կառավարության գործընկերության 2018-2020թթ. գործողությունների ծրագրով:

Թեև սեփականատերերի բացահայտումն ինքնին չի երաշխավորում տեղեկատվության ճշգրտություն, և առկա են մի շարք դժվարություններ պետական մարմինների կողմից դրանց պատշաճությունը ստուգելու առումով, այս տվյալների հրապարակայնացումը կարևորագույն գործիք է հանրային վերահսկողության միջոցով հանրային ծառայությունը բիզնես շահերի ազդեցությունից ապահովագրելու տեսանկյունից: Այս առումով խիստ կարևոր է իրական սեփականատերերի վերաբերյալ տվյալների անվճար հասանելիությունը հանրության համար, ինչպես նաև՝ հետադարձ կապի հնարավորությունը՝ հաղորդելու տվյալների անհամապատասխանությունը:

Ձեռնարկատիրական գործունեությունը կանխարգելելու մեկ այլ գործիք է հավատարմագրային կառավարման ինստիտուտը, որը Հայաստանում պատշաճ կարգավորված չի և փաստացի չի գործում:

**Առաջարկվում է հնարավորինս արագ ընդունել իրական սեփականատերերի գրանցմանն ու հրապարակմանն առնչվող օրենսդրությունը, ստեղծել համապատասխան իրավական հիմքերը և տեխնիկական համակարգերը: Իրավաբանական անձանց պետական գրանցման**

<sup>4</sup><http://www.oecd.org/tax/transparency/>

**ռեզիստորում տեղակայված տվյալները պետք է հասանելի լինեն հանրության համար անվճար:**

**Հարկավոր է կատարելագործել հավատարմագրային կառավարման ինստիտուտը՝ երաշխավորելով ձեռնարկատիրական գործունեության բացառումը հանրային ծառայողների կողմից: Առաջարկվում է հանրային պաշտոնյայի և հանրային ծառայողի առևտրային կազմակերպության մասնաբաժնի հավատարմագրային կառավարչի գործառույթները վերապահել միայն ֆինանսական շուկայի մասնագիտացված կառույցի՝ բացառելով ընտանիքի անդամի կամ այլ ֆիզիկական անձի կամ ոչ առևտրային կազմակերպության դերակատարումը:**

### *Ազդարարների ինստիտուտ*

Կոռուպցիոն գործերի բացահայտումների, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման համար կարևորագույն ինդիք է ազդարարների ինստիտուտի կայացումը: Թեև 2017թ.-ին ընդունվել է «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, այն, ըստ էության, չի կիրառվում կամ այդ մասին առկա չէ պատշաճ տեղեկատվություն, որը կխթաներ այս ինստիտուտի կայացումը և քաղաքացիներին մասնակից կդարձներ կոռուպցիայի դեմ պայքարին: Բավարար պայմաններ ստեղծված չեն ազդարարների պաշտպանության համար: Ավելի կոնկրետ՝ երաշխավորված չէ մասնավոր հատվածի, փակ հաստատությունների կամ ՉԼՄ-ների միջոցով հաղորդում տվող ազդարարների պաշտպանությունը: Լիարժեք հստակ չեն փոխկապակցված անձանց պաշտպանության համար նախատեսվող խողովակները:

**Առաջարկվում է արագացնել ազդարարման հանրային հարթակի ստեղծումը և ապահովել դրա պատշաճ գործարկումը, ինչպես նաև ձեռնարկել ակտիվ քայլեր ազդարարման պրակտիկան Հայաստանում կայացնելու համար: Կատարելագործել օրենսդրությունը՝ ազդարարների պաշպանությունն ապահովելու նպատակով:**

### Կոռուպցիայի բացահայտում և դատապարտում

#### *Միասնական մասնագիտացված անկախ իրավապահ մարմին*

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի համար իրավակիրառ պրակտիկայում լուրջ խոչընդոտ է մասնագիտացված՝ կոռուպցիոն հանցագործություններ քննող իրավապահ մարմնի բացակայությունը: Ներկայումս բազմաթիվ իրավապահ մարմիններ ներգրավված են կոռուպցիոն հանցագործություններ բացահայտելու գործում, սակայն չկա մեկ միասնական հակակոռուպցիոն պրոֆեսիոնալ մարմին, որն օժտված լիներ օպերատիվ-հետախուզական, հետաքննական և նախաքննական գործառույթներ իրականացնելու իրավասությամբ և, միևնույն ժամանակ, ունենար համապետական ներկայացվածություն:

**Առաջարկվում է ստեղծել կոռուպցիոն հանցագործությունները քննող մեկ միասնական մասնագիտացված իրավապահ մարմին, որն օժտված կլինի օպերատիվ-հետախուզական, հետաքննական և նախաքննական գործառույթներ իրականացնելու իրավասությամբ, կներգրավվի միայն կոռուպցիային առնչվող գործերում և կունենա համապետական ներկայացվածություն: Ներդնել լուրջ ռեսուրսներ՝ զարգացնելու հակակոռուպցիոն իրավապահ մարմնի կարողությունները, ինչպես նաև անհրաժեշտ գործիքակազմը (այդ թվում՝ հանրային ծառայողների տվյալների բազաների մատչելիությունը)՝ ապահովելու կոռուպցիոն գործերի պատշաճ քննություն:**

#### *Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակ*

Կոռուպցիոն հանցագործությունների ներկա ցանկը հաստատված է ՀՀ գլխավոր դատախազի 2017թ-ի հունվարի 19-ի N3 հրամանով՝ ներառելով շուրջ 70 հանցատեսակ: Սակայն կոռուպցիայի դեմ իրական պայքարի կարևոր քայլերից է օրենսդրական մակարդակով կոռուպցիոն հանցագործությունների ճանաչումը և սահմանումը:

**Առաջարկվում է կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը սահմանել ՀՀ քրեական օրենսգրքով:**

#### *Գողացված ակտիվների վերադարձ*

Ըստ *Global Financial Integrity* հետազոտական կազմակերպության 2015թ-ին տրված գնահատականի՝ 2004-2013թթ.-ին Հայաստանից ապօրինի ճանապարհով դուրս է բերվել 9.8 մլրդ դոլար<sup>5</sup>: Կոռուպցիայի դեմ պայքարի առաջնահերթություններից է նախորդ իշխանությունների օրոք տեղի ունեցած կոռուպցիայի դեպքերի, սխեմաների և մեխանիզմների բացահայտումը, ինչպես նաև ապօրինի ճանապարհով ձեռք բերված (այդ թվում՝ Հայաստանից դուրս հանված) ակտիվների վերադարձը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և ՀՀ քրեական օրենսգիրքը տալիս են նվազագույն գործիքներ ակտիվների որոնման և վերադարձի համար՝ նախատեսելով գույքի առգրավում, գույքի վրա կալանք դնել, գույքի բռնագանձումը և գույքի բռնագրավումը: Այդուհանդերձ, առկա են մի շարք խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ակտիվների վերադարձին միտված նախաձեռնությունների իրականացմանը: Մասնավորապես, առկա չէ ակտիվների վերադարձի քաղաքականություն, թերի է քաղաքացիական բռնագրավման ձևը, չկան կառույցներ, որոնք կզբաղվեին գողացված ակտիվների որոնողական աշխատանքներով, ապօրինի հարստացման

<sup>5</sup><https://www.gfintegrity.org/report/Illicit-financial-flows-from-developing-countries-2004-2013/>

հանցակազմը թերի է, բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը քրեականացված չի և այլն:

**Առաջարկվում է ընդունել և իրականացնել գողացված ակտիվների վերադարձին ուղղված քաղաքականություն, որն ի թիվս այլ կարգավորումների, պետք է վերանայի վաղեմության ժամկետները, սահմանի այն գումարային շեմերը/ժամկետները/պայմանները, որոնց դեպքում նախկին և ներկա պաշտոնյաները կարող են ներկայացնել տեղեկատվություն իրենց գործարքների, եկամուտների ու գույքի օրինականության վերաբերյալ:**

Ներդնել նվազ ծանր հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձանց հետ համագործակցության համաձայնագրերի ինստիտուտը՝ առավել ծանր հանցագործությունների բացահայտումը և մեղավորների քրեական պատասխանատվության անխուսափելիությունը երաշխավորելու նպատակով:

#### *Դատական համակարգ*

Օրենսդիր և գործադիր մարմիններում քաղաքական կամքի առկայության ներկայիս պայմաններում կոռուպցիան Հայաստանում արմատախիլ անելու ճանապարհին հիմնական խոչընդոտ են կոռուպցիայի դատական համակարգը և դատավորները: Հայաստանի արդարադատության համակարգի բարեփոխումների համար մշակվել են տարբեր միջոցառումներ, որոնք կարևոր է դիտարկել նաև կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում:

**Առաջարկվում է դատաիրավական բարեփոխումների շրջանակում առաջնահերթության կարգով կյանքի կոչել այն միջոցառումները, որոնք կոչված են երաշխավորելու դատավորների անկախությունը, նրանց նշանակման թափանցիկությունն ու հրապարակայնությունը, դատական գործերի նշանակման թափանցիկությունը, ինչպես նաև՝ սահմանափակելու հայեցողական որոշումների հնարավորությունը: Հարկավոր է վարել դատական վիճակագրություն՝ հնարավորություն տալով վերահսկել դատավորների վճիռների հետևողականությունը: Բանկային/վարկային գործեր քննող դատավորները պետք է հրապարակեն իրենց վարկատու բանկերի և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց տվյալները, որոնց հետ կնքել են փոխառության կամ վարկային պայմանագրեր, ինչպես նաև՝ փոխկապակցված անձ չհանդիսացող նվիրատուների անունները: Կոռուպցիոն գործերով պետք է զբաղվեն կոռուպցիոն գործերի մեջ մասնագիտացած՝ անբասիր վարկանիշ ունեցող դատավորները, որոնք պետք է լինեն նոր՝ ընտրված թափանցիկ և հրապարակային եղանակով:**

## **Հանրային կրթություն**

### *Հակակոռուպցիոն հանրակրթություն*

Կոռուպցիայի վերաբերյալ գիտելիք ձևավորելու և հանրային անհանդուրժողականություն ձևավորելու տեսանկյունից խիստ կարևոր է քաղաքացիների հակակոռուպցիոն կրթության երաշխավորումը՝ սկսած դպրոցական տարիքից: Հասարակագիտության ներկայիս դասագրքերը պարունակում են կոռուպցիա և թրաֆիքինգ անվանմամբ խիստ սահմանափակ բովանդակությամբ մի գլուխ, որը մատուցվում է ավագ դպրոցում միայն մեկ տարի և հեռու է կոռուպցիայի մասին տվյալ տարիքի աշակերտներին պատշաճ գիտելիք սերմանելու հնարավորությունից:

**Անհրաժեշտ է վերանայել Հասարակագիտության դասագրքերում կոռուպցիային առնվող բաժինների բովանդակությունը և առարկան դասավանդել ավագ դպրոցի բոլոր դասարաններում:**

### *Հանրային ծառայողների վերապատրաստում*

Թեև պետությունը ձեռնարկում է որոշ քայլեր հանրային ծառայողների կոռուպցիային առնչվող հարցերով վերապատրաստման համար, սակայն կոռուպցիայի դեմ համաժողովրդական պայքարի համատեքստում անհրաժեշտ է ակտիվացնել այս գործողությունը:

**Առաջարկվում է ավելացնել հանրային ծառայողների վերապատրաստումները՝ հատկապես շեշտադրելով շահերի բախումն ու ազդարարումը, թիրախավորելով ռիսկային ոլորտները և պաշտոնները, մշակելով համապատասխան ծրագրեր և իրականացնելով դասընթացներ:**

## **Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգում, մոնիտորինգ և հսկողություն**

### *Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգում և հսկողություն*

Հակակոռուպցիոն քաղաքականության համակարգման և հսկողության առումով ներկայում առկա է որոշակի ինստիտուցիոնալ խառնաշփոթ:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի գործառույթները ներառում են հակակոռուպցիոն ռազմավարության և հակակոռուպցիոն միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ **հսկողությունը**, հակակոռուպցիոն ռազմավարության, միջազգային

պարտավորությունների և ոլորտային ծրագրերի իրականացման **համակարգումը**, մոնիտորինգի արդյունքների քննարկումը և այլն<sup>6</sup>:

ՀՀ կառավարության աշխատակազմում գործում է հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժինը, որը սպասարկում է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին և, ի թիվս այլ գործառնությունների, իրականացնում է իր գործունեության ոլորտներին առնչվող ՀՀ կառավարության տվյալ տարվա գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների կատարման ընթացքի նկատմամբ **հսկողություն**<sup>7</sup>:

2017 թ. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ **օրենքով** նախատեսվող հանձնաժողովին վերապահվեցին կոռուպցիայի կանխարգելման **ռազմավարության մշակման**, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող **ռազմավարությունների** և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության իրականացման, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի մշակման, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի մշակման, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու, կրթական ծրագրերի իրականացման համար ուսումնամեթոդական ուղեցույցներ և այլ նյութերի մշակման ու տրամադրման լիազորությունները:

Սրա հետ մեկտեղ, **հակակոռուպցիոն ռազմավարության մշակման գործառնությունը**, ինչպես նաև միջազգային պարտավորությունների համակարգման գործառնությունը վերապահված է ՀՀ արդարադատության նախարարությանը:

Ակնհայտ է, որ հակակոռուպցիոն քաղաքականության ձևավորմանն առնչվող նման տարանջատված ինստիտուտների առկայությունը չի նպաստում հակակոռուպցիոն որակյալ քաղաքականության մշակմանը:

Հակակոռուպցիոն քաղաքականության կազմակերպման բացերի համատեքստում հարկ է նաև նշել, որ Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները դիտվում են որպես առանձին՝ իրար հետ կապ չունեցող հանձնարարականներ, ինչպես նաև չեն հանդիսանում ազգային հակակոռուպցիոն քաղաքականության՝ ռազմավարության և միջոցառումների ծրագրի բաղկացուցիչ մաս:

**Առաջարկվում է հակակոռուպցիոն քաղաքականության, դրա համակարգման և վերահսկողության գործառնությունը վերապահել Կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված անկախ մարմնին, ինչը բխում է նաև ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ**

<sup>6</sup> ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N165-Ն որոշում, հավելված 2, 2-րդ կետ

<sup>7</sup> ՀՀ կառավարության 19.02.2015թ.-ի N 165-Ն որոշում, հավելված 2, կետ 21,

**կոնվենցիայի պահանջներից: Այս պայմաններում, ՀՀ կառավարությանը կվերապահվի այդ ռազմավարության և միջոցառումների ծրագրի հաստատումը, օգտագործելով կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հարթակը շահագրգիռ քննարկումների կազմակերպման համար: Նման պայմաններում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել նաև կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ձևավորման և ընդհանրապես դրա գործունեության գաղափարախոսության մեջ:**

**Միջազգային հակակոռուպցիոն պարտավորություններն անհրաժեշտ է դիտարկել ազգային հակակոռուպցիոն ռազմավարության համատեքստում և հանձնարարականների իրականացումը ներառել ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրում՝ սինքրոնացնելով առնչվող այլ գործողությունների հետ:**

#### *Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ*

2018թ. ապրիլյան հեղափոխությունից հետո ՀՀ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը չի գործել և դրա կազմը չի վերանայվել՝ հիմք ընդունելով նոր իրողությունները: Այդ խորհրդում ներկայացված չեն այն բոլոր պետական մարմինների ներկայացուցիչները, որոնք այս կամ այն կերպ մասնակցություն ունեն հակակոռուպցիոն ռազմավարության մշակման ու իրականացման գործընթացում: Վերջին տարիներին խորհրդի նախկին նիստերը կրել են ձևական բնույթ և հիմնականում ծառայել են որպես հարթակ քաղաքացիական հասարակության առանձին ուսումնասիրությունների կամ զեկույցների ներկայացման ու դրանց վերաբերյալ քննարկումների համար: Կոնկրետ հակակոռուպցիոն քաղաքականության ուղղությունների, դրանց փոփոխությունների վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

Հարկ է նկատել, որ ինչպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պարագայում, այս կառույցի ձևավորման մեջ ևս ներմուծված են արհեստական և խմիտացիոն հանրային մասնակցության բաղադրիչներ: Այսպես, դրանում պարտադիր կերպով ներառված են բիզնես ոլորտի հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, մինչդեռ 2016թ.-ից ի վեր չի հաջողվել նրանց հատկացված տեղերը լրացնել համապատասխան կազմակերպություններով: Կառույցում պարտադիր տեղ է հատկացված մի հասարակական կազմակերպության, որը երբևէ հրապարակային հանդես չի եկել կոռուպցիայի վերաբերյալ դիրքորոշումներով կամ դրա դեմ պայքարին ուղղված գործողություններով: Եվս մեկ պարտադիր տեղ է հատկացվում հակակոռուպցիոն կոալիցիայի ներկայացուցչին, որում ներկայացված 97 կազմակերպություններից մոտ 28 տոկոսը կամ լուծարված է, կամ ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը, իսկ մի քանի տասնյակի գործունեության վերաբերյալ առհասարակ առկա չեն տվյալներ:



Առաջարկվում է վերակազմավորել և վերագործարկել ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը՝ ապահովելով երկրում կոռուպցիայի դեմ մղվող պայքարի քաղաքականության պատշաճ համակարգում, այդ թվում՝ դոնոր համայնքի շրջանում:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի անդամներ ճանաչել բոլոր այն պետական մարմինների ղեկավարներին կամ տեղակալներին, որոնք ներգրավված են հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրում, որպես պատասխանատու կատարողներ, ինչպես նաև խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի ներկայացուցիչներին:

Վերացնել հանրության մասնակցության ձևական և կեղծ ձևաչափերը: Խորհրդում հասարակական կազմակերպությունների ներկայացուցչականությունը նախատեսել՝ հիմք ընդունելով դրանց մասնագիտացումը, փորձառությունը և կոռուպցիայի դեմ հրապարակային դրսևորած սկզբունքայնությունը: Չուզահեռ նախատեսել առավել ճկուն և ներառական եղանակներ՝ ապահովելով խորհրդի աշխատանքների թափանցիկությունը (օրինակ՝ նիստերի հեռարձակում) և հասանելիությունը բոլոր շահագրգիռ կողմերի համար (օրինակ՝ նիստերի բաց ձևաչափ):

#### *Կոռուպցիայի վիճակի և հակակոռուպցիոն քաղաքականության մոնիտորինգ*

Թեև ՀՀ կառավարության աշխատակազմում գործում է հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի բաժին, Հայաստանում երբևէ չի իրականացվել կոռուպցիայի վիճակի, ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքների մոնիտորինգ: Պետությունն ընդունում է որոշումներ, ձևավորում քաղաքականություն և իրականացնում միջոցառումներ՝ առանց որևէ պատկերացում ունենալու կոռուպցիայի վիճակի, նախորդ միջոցառումների արդյունավետության կամ հանրային կարիքների մասին: Առկա չեն մոնիտորինգային ցուցանիշներ/ցուցիչներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ գնահատել ծրագրերի/գործողությունների արդյունավետությունը: ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի ստորաբաժանման աշխատանքը ծայրահեղ թույլ է և անհասկանալի:

Առաջարկվում է կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմնում զարգացնել կոռուպցիայի վիճակի գնահատման և հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի համար ինստիտուցիոնալ կարողությունները, իսկ ՀՀ կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիտորինգի ստորաբաժանմանը վերապահել զուտ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի բնականոն գործունեության ապահովման քարտուղարության գործառույթներ:

Կյանքի կոչել մոնիտորինգի և գնահատման վրա հիմնված քաղաքականության մշակման մոտեցումը՝ իրականացնելով հարցումներ և այլ ուսումնասիրություններ:

### Կոռուպցիայի դեմ պայքարում հաստատությունների ընդհանուր մոբիլիզացիա

Հայաստանում կոռուպցիան կրել է համակարգային բնույթ և տարածված է եղել բոլոր կառույցներում, բոլոր մակարդակներում և բոլոր ոլորտներում: Առանձին ոլորտներում և հաստատություններում գործել են և արմատավորվել են յուրահատուկ սխեմաներ ու մեխանիզմներ: Չնայած կոռուպցիայի դեմ հռչակած ներկայիս քաղաքական հայտարարություններին, այդ սխեմաները կայուն են և կենսունակ, քանի որ դրանց հիմքում հաճախ օրենսդրական և ինստիտուցիոնալ բացերն ու խախուտ կարգավորումներն են, որոնք դեռևս առկա են:

2003թ.-ից ի վեր Հայաստանի կառավարության կողմից ընդունված երեք հակակոռուպցիոն ռազմավարությունները կենտրոնացել են մի քանի առանձին ոլորտների վրա՝ իրականացնելով մի քանի կցկտուր գործողություններ, ընդունելով մի շարք օրենքներ և դրանով՝ ակնկալելով կոռուպցիայի նվազում: Այս մոտեցումը հիմնականում միտված էր ցույց տալու ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ պայքարելու կոռուպցիայի դեմ և ստանալու ֆինանսական աջակցություն: Հայաստանում հեղափոխությունից հետո ձևավորված քաղաքական կամքի պարագայում չի կարելի կենտրոնանալ առանձին ոլորտների վրա և հետաձգել մյուսներում կոռուպցիայի դեմ պայքարը՝ այդպիսով աղճատելով պետության վճռական և ընդհանրական մոտեցումը՝ վերացնելու տվյալ արատավոր երևույթը:

Կոռուպցիան արմատախիլ անելու համար կարևորագույն նախապայման է ոչ միայն մասնագիտացված կառույցների, այլև բոլոր հաստատությունների համատարած ներգրավումը կոռուպցիայի դեմ պայքարում և, համապատասխանաբար, ոլորտային կոռուպցիոն սխեմաների կազմաքանդումը: Այս առումով, հատկապես կարևորվում են հանրային ծառայությանն ու գույքին առնչվող ընդհանուր բնույթի գործընթացները, ինչպես օրինակ՝ հանրային ֆինանսներ, հանրային գնումներ, աշխատանքի ընդունում, վարձատրության համակարգ և այլն: Թեև հնարավոր է, որ հաստատություններում լինի անբավարար կարողությունների խնդիր, նման առաջադրանքն ինքնին արժեքավոր է կառույցների մոբիլիզացիայի, ռեֆլեքսիայի, իրավիճակին գնահատական տալու, ներառականության, քննարկումներ ծավալելու, լուծումներ փնտրելու առումով:

**Առաջարկվում է պետական կառավարում իրականացնող բոլոր մարմիններում անցկացնել կոռուպցիոն ռիսկերի գնահատում և վերհանել տվյալ համակարգում ներկայում ու նախկինում գործող սխեմաները՝ ներկայացնելով առաջարկություններ վերհանված խնդիրների կանխարգելման և օրենսդրական բացերի լուծման ուղղությամբ: Այս նպատակով կարող են օգտագործվել ինքնագնահատման մեխանիզմները և մասնակցային գործընթացները՝ քննարկումներին ներգրավելով ոլորտի շահագրգիռ բոլոր կողմերին:**